ՊԱՇՏՈՆ	Խորհրդատու, «Կենտրոն» մասնաճյուղ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Աշխատանքային ժամեր 10:00-22:00
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան,
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	12/04/2024.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵ	09/05/2024
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անժամկետ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ «Կենտրոն» մասնաճյուղի Խորհրդատուի հաստիքը զբաղեցնելու համար փնտրում է մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկ այցելած հաճախորդների կարիքների բացահայտում,
- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և Բանկի պրոդուկտների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում,
- Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վաճառքի իրականացում,
- Բանկոմատների և վճարային տերմինալների մասով հաճախորդներին խորհրդատվության մատուցում,
- Նոր, վերաթողարկված կամ առգրավված պլաստիկ քարտերի ընդունում, տրամադրում հաճախորդներին,
- Հաճախորդներին իրենց հաշիվների և այլ ծառայությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրում, սպասարկում,
- Հաճախորդներից Բանկի ծառայություններին վերաբերող դիմումների ընդունում, ընթացքի ապահովում,
- Հաճախորդների կողմից հնչեցված հարցերի և բարձրացված խնդիրների լիարժեք պարզաբանում և լուծում, առաջացած խնդիրներին արագ արձագանքում, հետադարձ կապի ապահովում,
- Հաճախորդների կողմից ներկայացված բողոքների և առաջարկությունների ընդունում, հետագա ընթացքի ապահովում, հետադարձ կապի ապահովում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում դիտվի որպես առավելություն,
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն,
- Բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային ծրագրերի իմացություն /MS Office/,
- Հայերեն գերազանց, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն,
- Հաճախորդների արդյունավետ սպասարկման հմտություններ,
- Հաղորդակցման և թիմում աշխատելու հմտություններ,
- Խաչաձև վաճառքի հմտություններ,
- Աշխատանքի ճիշտ կազմակերպման և ժամանակի կառավարման հմտություններ,
- Բանակցելու և խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ,

- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/34 :Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով: «ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: